ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Նորաբաց համայնք Երևանյան փ. թ 32, հեռ. 6-18-55
էլ.փոստ norabacgyux@.mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«_15 _11 2012թվականի N 21

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 26 կետի

Ավագանին որոշեց.

Հաստատել Արարատի մարզի «Նորաբաց համայնքի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

ԱՎԱԳԱՆԻ՝ Վ.Ապելյան կաց –
Ղ.Սողոմոնյան կաց –
Ա.Ասատրյան կաց –
Լ.Մելքոնյան կաց –
Մ .Սարգսյան կաց –
Գ. Թադևոսյան կաց –
Ա. Մուրադյան - բացակա

ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Նորաբաց համայնք Երևանյան փ. թ 32, հեռ. 6-18-55
էլ.փոստ norabacgyux@.mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«_15 _11 2012թվականի N 22-Ն

ՆՈՐԱԲԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով << «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 18 կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» << օրենքի պահանջներով

Ավագանին որոշեց.-

Նորաբաց համայնքում 2013 թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարնե-հի հետևյալ դրույքաչափերը

1. Համայնքի տարածքում նոր շենքերի շինությունների/ ներառյալ՝ ոչիմնական/ շինարարական /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքեր սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար՝

1/ Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

2. Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 դրամ:

բ. 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 դրամ:

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դր:

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման վերականգնման արդիականացման աշխատանքների բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում , վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

2/ Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում

1/ Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ

2/ Հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ , հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

6. Համայնքի տարածքում խաղատները,հանրային սննդի օբյեկտները , բաղնիքները զվարճանքի օբյեկտները ժամը 24.00 –ից հետո աշխատելու թույլտվության համար ընթացիք տարվա տեղական տուրք սահմանել

1/ առևտրի օբյեկտների համար 25.000 դրամ

2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 75.000 դր.ս

3/ բաղնիքների համար 200.000 դրամ

4/ խաղատների կազմակերպման համար 500.000 դր.

5/ շահումով խաղերի կազմակերպման համար 250.000 դրամ

6/ վիճակախաղերի կազմակերպման համար 100.000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում / բացառությամբ թաղային համայնքների/ մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայության իրականացնելու թույլտրվության համար տեղականտուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 10.000 դրամ

. Տեղական վճարներ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերը, հատկացնելու ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների փոխհատուցման վճար 1000 դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ անցկացնելու հետ կապված ծախսերը փոխհատուցման համար մասնակիցների վճար 1000 դրամ:

Որոշման 1 –ի, 2-րդ, 3-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի համար կիրառված է 0,5 գործակիցը:

ԱՎԱԳԱՆԻ՝ Վ.Ապելյան - կողմ -

Դ.Սողոմոնյան - կողմ

Ա.Ասատրյան - կողմ -

Լ.Մելքոնյան - կողմ -

Մ .Սարգսյան - կողմ -

Գ. Թաթոսյան - կողմ -

Ա. Մուրադյան - բացակա

ՆԱԽԱԳԱՀ՝ *Գ.ԳԱԼՍՏՅԱՆ*